Ինչպես ենք Մենք Որոշում, թե արդյոք Դուք դեռևս Հաշմանդամության Իրավասու եք

Բովանդակություն

Մենք կհավաքենք տեղեկատվությունը՝	1
Մենք կդիտարկենք փաստերը՝	2
Ի՞նչ ազդեցության կենթարկվեն Ձեր նպաստները՝	2
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	3

Դեպքերի մեծամասնությունում, Դուք ընթերցում եք տվյալ թերթիկը, քանի որ Դուք պարզապես հենց նոր նամակ եք ստացել, որտեղ Ձեզ ասվում է, որ մենք պատրաստվում ենք վերանայել Ձեր առողջական վիճակը: Օրենքի համաձայն, մենք պարտավոր ենք ժամանակ առ ժամանակ վերանայելու հաշմանդամության նպաստ ստացող բոլոր անձանց ընթացիկ առողջական վիճակը, որպեսզի համոզվենք, որ նրանք շարունակում են պահպանել իրենց հաշմանդամության իրավասությունը:

Սովորաբար, եթե Ձեր առողջական վիճակը չի բարելավվել, կամ եթե Ձեր հաշմանդամությունը դեռևս խոչընդոտում է Ձեզ աշխատելուց, ապա Դուք կշարունակեք ստանալ Ձեր նպաստները:

Մենք կհավաքենք տեղեկատվությունը՝

Մեր որոշումը կայացնելու գործընթացին օժանդակելու համար, մենք առաջին հերթին նոր տեղեկություններ կհավաքենք Ձեր առողջական վիճակի մասին:

- Մենք հարցում կկատարենք Ձեր բժիշկներից, հիվանդանոցներից, և այլ բժշկական աղբյուրներից՝ Ձեր բժշկական

գրառումների վերաբերյալ: Մենք կհարցնենք նրանցից, թե ինչպե՞ս է Ձեր առողջական վիճակը սահմանափակում Ձեր գործնեությունը, թե ի՞նչ են ցույց տալիս Ձեր բժշկական ստուգումները, և թե ի՞նչ բուժումներ են Ձեզ նշանակվել:

- Եթե մենք լրացուցիչ տեղեկատվության կարիք ունենանք, ապա մենք կխնդրենք Ձեզ, որպեսզի հատուկ զննություն ամ ստուգում անցնեք, որի համար մենք կվճարենք:

Մենք կդիտարկենք փաստերը՝

Հաջորդը, մենք կդիտարկենք, թե ինչ մակարդակի վրա էր Ձեր առողջական վիճակը՝ Ձեր գործը վերջին անգամ վերանայելու ժամանակ: Մենք նաև կդիտարկենք ցանկացած նոր առողջական խնդիր, որը Դուք կարող եք ունենալ:

Մենք որոշում կկայացնենք առ այն, թե արդյո՞ք Ձեր առողջական վիճակը բարելավվել է, թե ոչ: Եթե մենք որոշում կայացնենք առ այն, որ Ձեր առողջական վիճակը բարելավվել է, ապա մենք կկայացնենք որոշում այն մասին, թե արդյո՞ք Ձեր առողջական վիճակը բարելավվել է բավարար չափով, ինչի արդյունքում Դուք աշխատելու հնարավորություն կունենաք:

Մենք նաև կդիտարկենք այն հարցը, թե արդյո՞ք Ձեր ընդհանուր առողջական վիճակը ազդեցություն կունենա այն հանգամանքի վրա, թե ինչ տեսակի աշխատանք Դուք կարող եք կատարել: Այնուհետև, մենք կդիտարկենք Ձեր կողմից անցյալում կատարվող աշխատանքի պահանջները և ցանկացած այլ տեսակի աշխատանքի պահանջները, որը Դուք ի վիճակի կլինեք կատարելու ներկայումս:

Ի՞նչ ազդեցության կենթարկվեն Ձեր նպաստները՝

Եթե Ձեր առողջական վիճակը բարելավվի, և մենք որոշենք, որ Դուք կարող եք աշխատել, ապա Ձեր նպաստները կդադարեցվեն:

Ձեր հաշմանդամության նպաստները նույնպես կդադարեցվեն, եթե՝

- Դուք կարող եք աշխատել, քանի որ Ձեզ համար շահեկան է եղել մասնագիտական վերապատրաստումը, կամ Դուք առաջընթաց եք ապրել Ձեր բուժման կամ մասնագիտական տեխնոլոգիաների շնորհիվ:
- Մենք սխալվել ենք մեր ավելի վաղ ժամանակահատվածում կայացված որոշումներում՝ Ձեր հաշմանդամության նպաստը շարունակելի ճանաչելու վերաբերյալ:
- Դուք չեք հետևել Ձեր բժիշկի կողմից նշանակված բուժումներին (առանց խոհեմ պատճառաբանության), և հավանականորեն, Դուք կկարողանայիք աշխատել բուժմանը հետևելու դեպքում:
- Դուք մեզ տրամադրել եք կեղծ կամ մոլորեցնող տեղեկատվություն, երբ մենք որոշում ենք կայացրել ավելի վաղ ժամանակահատվածում:
- Դուք չեք համագործակցել մեզ հետ, և Դուք չեք ունեցել մեզ հետ չհամագործակցելու խոհեմ պատճառաբանություն: և
- Դուք աշխատում եք և Ձեր միջին ամսական հասույթը վկայում է, որ Դուք կատարում եք նկատառելի հասութաբեր աշխատանք: Մեր կողմից նկատառելի և հասութաբեր համարվող հասույթի գումարը փոփոխվում է յուրաքանչյուր տարի: Ընթացիկ տվյալների համար, հղում կատարեք տարեկան Տեղեկությունների Թարմացում տեղեկագրին (Հրատարակություն հ. 05-10003-AM): Այնուամենայնիվ տվյալ իրավիճակը չի

(շրջել)

անդրադառնա Հավելյալ Ապահովության Եկամտի (Supplemental Security Income) վճարներին:

Եթե մենք որոշենք, որ Ձեր հաշմանդամության նպաստները դադարեցվելու են, և Դուք համաձայն չեք լինի այդ որոշման հետ, ապա Դուք կարող եք բողոքարկել մեր որոշումը: Դա նշանակում է, որ Դուք կարող եք խնդրել, որպեսզի Ձեր գործը կրկին վերանայվի: Երբ Դուք նամակ եք ստանում, որտեղ ասվում է մեր որոշման մասին, այնտեղ նաև նշված կլինի այն մասին, թե ինչպես Դուք կարող եք բողոքարկել մեր որոշումը:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ: